

Հայաստանի ազգային գրադարանը նշում է պետական կարգավիճակ ստանալու 100-ամյակը

Գրադարանը տիեզերք համարող Խորիսե Լուիս Բորիսեսի և ֆանտաստ գրողների մտքով չէր էլ անցնի, որ 21-րդ դարասկզբին գրադարան կլինի նաև տիեզերքում: «Միր» ուղեծրային կայանում վերջին տարիներին տիեզերական գրադարան է ստեղծվել, որտեղ կարելի է գտնել նեո մասնագիտական գրականությունից մինչև Իլֆի ու Պետրովի վեպերը: Հայաստանի ազգային գրադարանը թեև տիեզերքի հետ չես համեմատի,



սակայն գաղտնիք չէ, որ Ազգային գրադարանը հայ տպագիր գրքի ու մտքի ամենամեծ գրապահոցն է աշխարհում. գրադարանագիտական, մատենագիտական, մեթոդական և տեղեկատվական համապետական

գիտահետազոտական կենտրոն:

Մշակութային, գիտական և կրթական այս կարևոր հաստատությունը՝ Հայաստանի ազգային գրադարանը հուլիսի 4-ին նշեց պետական կարգավիճակ ստանալու հարյուրամյակը: Միջոցառմանը ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը, ԿԳՄՍ նախարարի օգնական Դավիթ Դանիելյանը, ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գրադարանային ոլորտի գլխավոր



մասնագետ Նազիկ Հովասափյանը, նախարարության այլ ներկայացուցիչներ, գրողներ, արվեստի, մշակույթի ականավոր գործիչներ:

Հոբելյանական միջոցառման ժամանակ կազմակերպվեց մրցանակաբաշխություն. բեմահարթակում հանդիպեցին 2018-ին հայ ժամանակակից գրողների գործերն ամենաշատ ընթերցած տասը



ընթերցողները և ամենաընթերցված հայ ժամանակակից գրողները: Լավագույն տասը ընթերցողներին «Անտարես» հրատարակչության կողմից շնորհվեցին խրախուսական մրցանակներ: Հանդիսատեսը միջաջամանը մասնակցելու

հնարավորություն ստացավ ինտերակտիվ գրքախաղի միջոցով. հատվածներ ընթերցվեցին գրադարանի 2018-ին ամենաշատ կարդացված հայ ժամանակակից գրողների գործերից: Ամենաշատ հեղինակներ կռահած ընթերցողը Հայաստանի ազգային գրադարանի կողմից ստացավ «Էդիթ Պրինտ» հրատարակչության տրամադրած մրցանակը՝ հայերեն առաջին տպագիր գրքի՝ «Ուրբաթագրքի» ֆաքսիմիլե տարբերակը: Միջոցառման ընթացքում գրադարանի երկարամյա աշխատակիցներն արժանացան պատվոգրերի:

Տոնական միջոցառումն ուղեկցվեց համերգային ծրագրով, որին մասնակցեցին երգիչ, երգահան, կոմպոզիտոր Վահան Արծրունին, դաշնակահարուհի, միջազգային մրցույթների բազմակի հաղթող Լուիզա Կոստանյանը, քանոնահարուհի Մարիաննա



Գևորգյանը, երգիչ Վահագ Ռաշը, երաժիշտ, «Լավ էլի» խմբի վոկալիստ Մհեր Մանուկյանը:

Հոբելյանական միջոցառումները սկսվել էին հուլիսի 2-ից. Այդ օրը երկու ցուցադրությամբ ներկայացավ գրադարանի Անձեռնմխելի գրականության բաժինը, ներկայացվեցին գրադարանի հիմքը կազմող արական գիմնագիայի գրադարանի հավաքածուից որոշ նմուշներ, նվիրատվությունների հավաքածուից ինքնագրերով գրքեր եւ պատվոգրեր:



Հուլիսի 3-ին մատենագիտության եւ գրադարանագիտության բաժինը ներկայացավ «Գրադարանի հրատարակությունները» ցուցադրությամբ: Նույն օրը այցելուները հնարավորություն ստացան ծանոթանալու գրադարանի անցյալին՝ արխիվային լուսանկարների միջոցով:

Հոբելյանական միջոցառումները շարունակվելու են ողջ տարվա ընթացքում. կկազմակերպվեն գիտաժողովներ, գրական ընթերցումներ, դասախոսություններ, ցուցադրություններ եւ այլն:

